ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«4» հոկտեմբերի 2022 թվականի N: 516 -Ա ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԱՐԵՎՇԱՏԻ ՄԵՏԱՔՍԵԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ,ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳԵՂԱՆԻՍՏԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ՍՊԱՆԴԱՐՅԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԻԱՑՅԱԼ ԽՈՐՀՐԴԻ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿԱԶՄՈՒՄ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 11-Ի N 198-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ կետի «ա» ենթակետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 34-րդ հոդվածի 1-3-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության 32-րդ և 46-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի մարտի 18-ի N 113-Ն հրամանի 1-ին կետով հաստատված «Հայաստանի Հանրապետության «Պետական հանրակրթական ուսումնական

հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման կարգի» 16-րդ, 19-րդ, 20-րդ, 21-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գեղանիստի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ծնողական խորհրդի 2022 թվականի սեպտեմբերի 6-ի N2 նիստի արձանագրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Դադարեցնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Արևշատի Մետաքսեի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գեղանիստի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Սպանդարյանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության միացյալ խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) անդամ՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գեղանիստի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ծնողական խորհրդի կողմից առաջադրված Արտյոմ Խալաթյանի լիազորությունները:

2. Խորհրդի անվանական կազմում հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գեղանիստի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ծնողական խորհրդի կողմից առաջադրված Վարսենիկ Գալստյանին՝ մինչև խորհրդի լիազորությունների ժամկետի ավարտը:

3. Այդ կապակցությամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2022 թվականի ապրիլի 11-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Արևշատի Մետաքսեի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գեղանիստի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Սպանդարյանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության միացյալ խորհրդի կազմը հաստատելու, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2016 թվականի

ապրիլի 20-ի N 89-Ա որոշումը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2016 թվականի ապրիլի 21-ի N 93-Ա որոշումը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2016 թվականի հունիսի 29-ի N 257-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 198-Ա որոշման հավելվածի 8-րդ կետում «Արտյոմ Խալաթյան» բառերը փոխարինել «Վարսենիկ Գալստյան» բառերով:

Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է